ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հունիսի 2015թ. **N--Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն թարգմանիչ, հրապարակախոս, լրագրող Արմեն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ավետ Ավետիսյան փողոց հ. 70 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թարգմանիչ, հրապարակախոս, լրագրող Արմեն Հովհաննիսյանը ծնվել է 1936թ. մարտի 10-ին Թավրիզում (Իրան):

1946թ. ընտանիքով ներգաղթել է Հայաստան: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: Աշխատել է «Ավանգարդ» թերթում, Հայաստանի հեռուստառադիոպետկոմում, հիմնել է «Ծիածան» ռադիոկայանը, ղեկավարել է ռադիոհեռուստատեսության լրատվական ծառայության երաժշտական բաժինը: Աշխատել է գրահրատարակչության ոլորտում: Վարպետության դասեր է վարել Ռուս-հայկական, «Գլաձոր» և Հայկական պետական մանկավարժական համալսարաններում:

Նրա հրապարակախոսական հոդվածներն առանձնացել են նյութի և հարցադրումների լայն ընդգրկումով ու հրատապությամբ, քաղաքացիական ակտիվ կեցվածքով, խիզախ դիրքորոշումով, մեր երկրի ու մշակույթի նկատմամբ անսահման սիրով ու նվիրվածությամբ: Տարբեր տարիներին այդ նյութերն ամփոփվել են «Աղետ» (1990), «Հայաստան, երկիր դրախտավայր» (1993), «Խորհրդատվություններ 2-րդ էջի համար» (1993), «Ուրբաթախոսություն» (2001) և այլ ժողովածուներում: Առավել ամբողջական դրանք ընդգրկվել են «Զանգակատուն բերող ճանապարհին» եռահատորյակում, որի երրորդ հատորը տպագրության ընթացքի մեջ է:

Ծանրակշիռ է նրա վաստակը գեղարվեստական թարգմանության ասպարեզում: 1960թ.-ից հայ ընթերցողը, շնորհիվ Արմեն Հովհաննիսյանի, ծանոթացել է ռուս գեղարվեստական արձակի ընտիր նմուշներին՝ ընդհանուր հաշվով մոտ 8000 էջ թարգմանական գրականություն. Ալեքսանդր Պուշկին, Ֆեոդոր Դոստոևսկի, Անտոն Չեխով, Ալեքսեյ Կուպրին, Միխայիլ Բուլգակով, Ալեքսանդր Սոլժենիցին, Վասիլի Շուկշին և այլն, երկու տասնյակից ավել հեղինակներ:

1989թ. արժանացել է ՀՀ ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակին: 1989թ.-ին՝ ՀԳՄ Եղիշե Չարենցի անվան, ապա 2001թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԳՄ համատեղ «Կանթեղ» թարգմանական մրցանակներին:

2004թ.-ին պարգևատրվել է «Ռուսաստանի Դաշնության Բարեկամության» շքանշանով:

Արմեն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Ավետ Ավետիսյան փողոց հ.70 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արմեն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արմեն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ